Կարծիք

Հարությունյան Լևոն Սուրենի

«Իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգը. Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)» թեմայով

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության վերաբերյալ

Լևոն Սուրենի Հարությունյանի ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը նվիրված է իրավագիտության և իրավունքի տեսության խնդրահարույց թեմաներից մեկի՝ իրավունքի աղբյուրների համալիր ուսումնասիրությանը:

Գրախոսվող աշխատանքի հրատապությունը և արդիականությունը, ամենից առաջ, պայմանավորված է ազգային իրավական համակարգի և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմամբ:

Նախքան ատենախոսության բովանդակության վերլուծությանն անցնելը, անհրաժեշտ է ընդգծել հեղինակի միանգամայն խորը և համակողմանի պատկերացումները իրավունքի տեսության և իրավունքի աղբյուրների հիմնախնդիրների վերաբերյալ:

Ատենախոսության նպատակը, խնդիրները, առարկան և օբյեկտը հանդիսանում են իրավունքի աղբյուրների համակարգի համակողմանի ուսումնասիրումը, դրանց առանձնահատկությունների բացահայտումը և դերակատարումը իրավակարգավորումների ոլորտում:

Հեղինակը ոչ միայն տեսական վերլուծության է ենթարկել քննարկվող թեմայի հարցերը, այլև ստացված արդյունքների հիման վրա մշակել է գործնական նշանակության առաջարկություններ, որոնք կարող են որոշակիորեն բավարարել իրավունքի աղբյուրների համակարգը՝ ազգային իրավունքում:

Նման սկզբունքային մոտեցումը կանխորոշել է ատենախոսության բովանդակության պահանջվող գիտական խորությունը և հնարավորություն է ընձեռել հեղինակին հանգելու գիտատեսական և կիրառական նշանակություն ունեցող արժեքավոր եզրահանգումների և եզրակացությունների:

Գրախոսվող ատենախոսության մեջ ըստ արժանվույն է գնահատված իրավունքի յուրաքանչյուր աղբյուրների տեղն ու դերը իրավակարգավորումների ոլորտում:

Ատենախոսության մեջ հեղինակը առանձին ուսումնասիրման առարկա է դարձրել իրավունքի աղբյուրների ստորադասության և իրավաբանական ուժի հետ կապված հարցերը, ինչը ատենախոսության բովանդակությունը առավել լիարժեք է դարձրել:

Ատենախոսության վերջում հեղինակը ամփոփել է իր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները և հանգել է մի շարք արժեքավոր տեսական ու գործնական հետևությունների:

Ընդհանուր առմամբ հաջողված և գիտականորեն հիմնավորված ատենախոսության մեջ, մեր կարծիքով, տեղ են գտել առանձին թերացումներ և բացթողումներ, որոնք որակ չեն կազմում և որոնց վերացումը կարող է նպաստել այս թեմայի շուրջ հեղինակի կողմից կատարվելիք հետագա հետազոտական աշխատանքներին:

Դրանք, մեր կարծիքով, հանգում են հետևայլին.

Առաջին, խոսելով պոզիտիվ իրավունքի աղբյուրների մասին, մեր կարծիքով, հեղինակը պետք է կանգ առնել նաև աստվածային և բնական իրավունքի աղբյուրների, դրանց էության և առանձնահատկությունների վրա:

Երկրորդ, ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը ինչ-որ չափով ուսումնասիրության առարկա դարձներ նաև իրավունքի պատմական աղբյուրները (Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը, հայ կանոնական իրավունքը, պատմական սահմանադրական ակտերը և այլն) ու այդ դիրքերից գնահատեր հայ իրավունքի աղբյուրների համամարդկային արժեքները, դրանց պատմական և արդիական նշանակությունը:

Սակայն վերոնշված դատողությունները և նկատառումները կրում են հեռանկարային ու նպատակային բնույթ և չեն ազդում ատենախոսական աշխատանքի դրական արժեքների վրա:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրած մասնագիտությանը:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրատարակած մենագրություններում և հոդվածներում:

Ելնելով վերարադրյալից, գտնում ենք, որ Լևոն Սուրենի Հարությունյանի «Իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգը. Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն) թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ, գիտական նորույթ պարունակող, ամբողջական և ավարտուն հետազոտություն է, որը լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ.Զ. Սարգսյան**

Հովհաննես Զավենի Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի Մաշտոց համալսարանի ռեկտոր՝ Զավեն Սարգսյան